ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ընդդեմ Թերթ.am առցանց լրատվամիջոցի՝ Աստղիկ Քեշիշյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Աննա ԻՍՐԱԵԼՅԱՆ
Հայկուհի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել ԵՊՀ ուսանողուհի, 17.am երիտասարդական կայքի թղթակից Աստղիկ Քեշիշյանը՝ ընդդեմ Թերթ.am առցանց լրատվամիջոցի:

Ըստ բողոքի հեղինակի, 2017թ. նոյեմբերի 7-ին ուսանողական դասադուլից իր արած լուսանկարը հրապարակել է իր ֆեյսբուքյան էջում «Շրջում ենք ֆակուլտետներով» վերտառությամբ: Այդ լուսանկարը հետագայում Թերթ.am կայքն օգտագործել է՝ առանց իր հետ համաձայնեցնելու եւ առանց հղման: Ավելի ուշ լուսանկարը տարածվել է այլ կայքերում՝ որպես Թերթ.am-ի լուսանկար:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. Աստղիկ Քեշիշյանը 2017թ. նոյեմբերի 7-ին ներկա է եղել Երեւանի պետական համալսարանի ուսանողների դասադուլին եւ ցույցին, լուսանկարել է եւ լուսանկարը հրապարակել իր ֆեյսբուքյան էջում, «Շրջում ենք ֆակուլտետներով» վերտառությամբ եւ #միացիր! #տարկետումչինելուԱ! հեշթեգերով:

2. Նույն օրը Թերթ.am առցանց լրատվամիջոցը, դասադուլի ժամանակագրությունում օգտագործել է վերոհիշյալ լուսանկարը, առանց հղման:

3. Դիտորդ մարմնի հարցմանն ի պատասխան, Թերթ.am առցանց լրատվամիջոցի գլխավոր խմբագիրն ընդունել է իրենց թերացումը եւ հենց հարցման օրը՝ դեկտեմբերի 7-ին, համապատասխան լուսանկարի տակ ավելացրել. «Լուսանկարը՝ Աստղիկ Քեշիշյանի ֆեյսբուքյան էջից» գրառումը:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **«Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք**

Հոդված 3. Հեղինակային իրավունքի օբյեկտները

1. Հեղինակային իրավունքի օբյեկտ է համարվում գրականության, գիտության եւ արվեստի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքը (այսուհետ՝ ստեղծագործություն), որն արտահայտված է բանավոր, գրավոր կամ այլ օբյեկտիվ ձեւով, ներառյալ՝ մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրոնային ձեւը, անկախ ստեղծագործության ծավալից, նշանակությունից, արժանիքներից ու ստեղծման նպատակից:
(...)
4. Հեղինակային իրավունքի օբյեկտներ են՝
(...)
ը) լուսանկարչական եւ նման եղանակով ստեղծված ստեղծագործությունները, որոնք համապատասխանում են սույն հոդվածի առաջին մասի դրույթներին:

Հոդված 22. Ստեղծագործության ազատ օգտագործումը

1. Ազատ օգտագործում է համարվում առանց հեղինակի համաձայնության և վարձատրության, սակայն հեղինակի անվան և ստեղծագործության սկզբնաղբյուրի պարտադիր նշումով, ստեղծագործության օգտագործումը, որը չի հակասում ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին և չի վնասում ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահերը:

2. Ազատ օգտագործմամբ թույլատրվում է՝
(...)
ե) լուսանկարչության, կինոարվեստի, հեռարձակման միջոցներով ընթացիկ իրադարձությունների մասին հաղորդման նպատակով դրանց ընթացքում տեսած կամ լսած գրական և արվեստի ստեղծագործությունների վերարտադրումը և հրապարակային հաղորդումը՝ տեղեկատվության նպատակն արդարացնող ծավալով:

II. **Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր**

Սկզբունք 2. Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝
(...)
2.4. հարգել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը, մեջբերումներ և արտատպություններ կատարելիս նշել աղբյուրները:

Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

- հաշվի առնելով, որ Ֆեյսբուք սոցիալական ցանցը հանրային տարածք է, եւ յուրաքանչյուր օգտատեր, ինչպես նշված է այդ ցանցի կանոնակարգերում, ինքն է կարգավորում հանրային տարածքում իր հրապարակումների տեսանելիության եւ օգտագործման հնարավորությունները,

- նշելով, որ տվյալ լուսանկարը, ամեն դեպքում, հեղինակային իրավունքի օբյեկտ է եւ կարող էր ազատորեն օգտագործվել՝ հեղինակի անվան եւ ստեղծագործության սկզբնաղբյուրի նշմամբ,

- հղում կատարելով նաեւ Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրի 2.4 կետի՝ արտատպություններ կատարելիս աղբյուրները նշելու պահանջին՝

արձանագրում է, որ տվյալ կոնկրետ դեպքում Թերթ.am առցանց լրատվամիջոցը թերացել է՝ չնշելով հեղինակի անունն ու ստեղծագործության սկզբնաղբյուրը:

2. Դիտորդ մարմինն ի գիտություն է ընդունում, որ Թերթ.am-ի խմբագրությունը, Դիտորդ մարմնի հարցումից հետո ընդունել է իր թերացումն ու վերացրել այն՝ տվյալ լուսանկարի տակ ավելացնելով «Լուսանկարը՝ Աստղիկ Քեշիշյանի ֆեյսբուքյան էջից» գրառումը եւ արձանագրում է, որ դրանով վեճը կարելի է լուծված համարել:

3. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հորդորում է լրատվամիջոցներին՝

- նման դեպքերում առաջնորդվել «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների» մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով եւ Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրի 2.4 կետի պահանջներով, իսկ թերությունը հայտնաբերելու կամ այդ մասին նախազգուշացվելուց անմիջապես հետո վերացնել այն,

- հիշել, որ այսօր՝ թվային ու ինտերակտիվ կապերի դարաշրջանում հանրությունը տեղեկությունների տարածման գործընթացի ուղղակի մասնակիցն է, իսկ լրատվամիջոցներն էլ շահագրգռված են նման մասնակցությամբ,

- խրախուսել հանրային մասնակցությունն ու հարգել լրատվամիջոցին նյութեր տրամադրող մարդկանց՝ նրանց անունը նշելով, իսկ բաց աղբյուրներ օգտագործելուց առաջ՝ հայցել վերջիններիս թույլտվությունը:

4. Դիտորդ մարմինը խորհուրդ է տալիս սոցիալական ցանցերի այն օգտատերերին, որոնք իրենց գրառումները, լուսանկարները կամ այլ նյութերը հեղինակային ստեղծագործություններ են համարում, նշել դրանց օգտագործման իրենց պահանջները, միաժամանակ՝ նկատի ունենալ, որ սոցիալական ցանցում անսահմանափակ թվով անձանց մատչելի ցանկացած գրառում, լուսանկար կամ տեսանյութ կարող է ազատորեն օգտագործվել:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի նիստում,
Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով՝

Մեսրոպ Հարությունյան, մամուլի փորձագետ

Աշոտ Մելիքյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Մեսրոպ Մովսեսյան, «A1+» հեռուստաընկերության տնօրեն

Արա Շիրինյան, «Շողակաթ» հեռուստաընկերության գեղարվեստական ղեկավար

Նունե Սարգսյան, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Գեղամ Վարդանյան, Media.am-ի պրոդյուսեր

Կարինե Քալանթարյան, Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի դասախոս

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: